



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից հիմնադրված,  
Վանաձորի քաղաքացիական – Երիտասարդական կենտրոնի  
համակարգող, «ՍինեՄԱրթ» ԵՀԿ-ի նախագահ  
Վարդուհի Անանյանին

ք. Վանաձոր, Աբովյան փ. 1

Հարգելի՛ Վարդուհի,

Ի պատասխան Ձեր 12.08.2019թ. թիվ 1/2019 հարցմանը հայտնում եմ՝

1. Դեռևս նախնական և քննարկման ենթակա աշխատանքային տարբերակով նախատեսվում է ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքը միավորել Գուգարք համայնքի հետ Գուգարք համայնք անվանմամբ և Գուգարք վարչական կենտրոնով: Խոշորացման այս տարբերակը վերջնական չի և հետագայում կարող է փոփոխության ենթարկվել:

2. Շահումյան համայնքում համայնքի միավորման հարցի հետ կապված հանրային լսում չի անցկացվել:

Ս./թ. հուլիսի 10-ից 25-ը ընկած ժամանակահատվածում խոշորացման ենթակա մարզի 42 համայնքներում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Լոռու մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվել են հանդիպումներ համայնքների ՏԻՄ-երի և բնակիչների հետ: Հանդիպումների ժամանակ մասնակիցները իրազեկվել են խոշորացման գործընթացին և ներկայացվել է համայնքների խոշորացմանն ուղղված ՀՀ կառավարության ծրագիրը:

Մինչև խոշորացման գործընթացը սկսելը տարբեր ձևաչափերով կկազմակերպվեն այլ հանդիպումներ և քննարկումներ:

3. Կից ներկայացնում եմ 2008թ.-ից մինչև 2019 օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից Շահումյան համայնքին տրամադրված ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը:

4. 2008թ.-ից մինչև 2019 օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում Տանձուտ գետի հունի մաքրման համար ՀՀ կառավարության կողմից ՀՀ Լոռու մարզպետարանի միջոցով կամ անմիջականորեն (կից ներկայացնում եմ համայնքի ղեկավարի գրությունը) Շահումյան համայնքին ֆինանսական միջոցներ չի տրամադրվել:

Առդիր՝ 3 էջ:

Հարգանքով՝ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

 Invalid signature

X



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Գ.ՄԱՐԿՈՍՅԱՆ